

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Միրելի՛ սյունեցի երիտասարդներ

Շնորհավորում եմ ձեզ այսօր նշվող Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ:

Մաղթում եմ բոլորիդ երիտասարդությանը բնորոշ լավատեսություն, կենսախնդություն, նպատակներին հասնելու հաստատակամություն եւ դժվարություններին դիմագրավելու ամուր կամք: Թո՛ղ

երիտասարդական երազանքների եւ հույսերի վառ ալիքները մշտապես ուղեկցեն ձեզ ու բազմապատկեն հավատն ապագայի հանդեպ:

Երիտասարդ տարիները ոչ միայն կյանքի որոշակի ժամանակահատված են, այլեւ հոգու վիճակ, երբ ձեր մեջ ստեղծագործ ուժերի ահռելի պաշար էք տեսնում եւ համարձակություն՝ անգամ թվացյալ անհնարին հասնելու համար:

Ձեր ունեցած մեծ ներուժն է, որ անընդհատ փոփոխություններ է բերում մեր հասարակություն, եւ այսօր էլ տեսնում էք, որ կառավարման բոլոր օղակներում մեծ տեղ է տրված երիտասարդությանը:

Ձեր անձնական հաջողություններով ու ձեռքբերումներով է կերտվում նաեւ հարազատ համայնքի, մարզի, երկրի պատմությունը, ուստի, օգտվե՛ք այսօր ունեցած երիտասարդական ավյունից եւ ձգտեք դառնալ մեր հայրենիքի համար արժանավոր քաղաքացիներ:

Եվս մեկ անգամ շնորհավո՛ր օգոստոսի 12-ի տոնը, թո՛ղ բոլորիդ կյանքի ուղին հաղթական արշավ լինի դեպի առաջընթացը, դեպի բարին ու առավել գեղեցիկ պետության կառուցումը:

Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյան

12 օգոստոսի 2018թ.